

ՅՈՎՍԷՓ ՀԱՅԴՐԻՍ

Կէօրնների

Իրական վէպ իբր դրամ ներկայացուած մէկ արարուածով:

ԱՆՁԻՆՔ

Հարիւրապետ

Մեծ տեղակալ

Տասնապետ

Վաճառական

Վիրաբոյժ

Բաղաբացի

} հետեակ զօրաց զունդէն
} Փօգէրայէ

(Դործողութիւնը կը կատարուի Մօնտէրէյօյի պատերազմէն վերջը Փօգէրայի մէջ երեկոյին 9 Յունիս 1800)

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

(Փօգէրայի մէջ մենատը փողոց: Խորը կը տեսնուի դռուն ու պատուհանները փակուած եւ կանաչներով ծածկուած մի տուն: Զախ կողմը սանդուխտով տուն):

Հարիւրապետը, աջ ձեռքը ծանրագէտ վիրաւորուած՝ նստած է Տեղակալի մօտ, որն անզգայ ընկած է սանդուխտին վրայ):

Հարիւրապետ. Կեանքի նշան մի չկայ: Ընկե՛ր, դու վերջագուցիւր զայն:—Եւ սակայն սիրտը կը բաբախէ դեռ,— Աստուած իմ, չեմ գիտեր թէ ուրախանալու եմ թէ ոչ: Այո՛,

սիրտը կը բարախէ դեռ: Եթէ կարենայի սորան օգնութիւն մի ձեռք բերել, Ո՛չ, ո՛չ, պէտք է՛ որ փափագիմ, այդ պատճառ պիտի լինի իւր վշտերն աւելի երկար տեւելու համար միայն, Կոնէ իրեն հետ լմնցած են նրանք:—Ամեն դուռները փակած են քաղաքացիները, աւարառու ֆրանսիացիներուն հանդէպ ունեցած վախերնուն չեն համարձակեր փողոց ելնել. իզուր զարկի բոլոր դռները, ոչ որ կուզէ բանալ, ոչ որ կուզէ մեզ ընդունել: Չեմ կրնար իմ ձախ ձեռքովս աւելի հեռուն քարշ տալ զինքը, այստե՛ղ պիտի մեռնի նա:— Իւր մարդարեւութիւնը կը կատարուի:—Մինչդեռ նա այս առաւօտ իւր վաշտին հետ մօտէս կանգնէր, գերագոյն հրաժեշտի ողջոյնը տուաւ ինձ, խնդացի ես. բայց նա իրաւունք ունէր:—Իմ տկար արիւնէս պէտք է որ վախենան գուշակութիւնները, ապա թէ ոչ իմ կորուսած ազատութեանս և ձեռքիս համար այս գիշեր շատ գործեր տեսնողի ապացոյցը պիտի տայի: Բայց ես այնքան կենսալի և զուարթ քաջութեամբ կրակին դիմեցի, որ կարծես թէ ինձ համար գնդակ չկար, և այժմ այստեղ նստած եմ գերի բռնուած, վիրաւորուած և մինչև իսկ առանց վիրահայի:—Չեմ ուզեր հիւանդանոց գնալ, մինչև որ չստուգեմ թէ ի՞նչ պիտի լինի սա, ինքն ևս նոյնը պիտի ընէր ինձ:—Գերի՛, բայց անիծեալ բառ մի է այս:—Գերի՛, ե՛ս գերի:—Ո՛հ, ի՞նչ կըսեմ, պատերազմի գնդակը տարօրինակ կերպով կիցնայ, այսօր ինձ, վաղը բեզո՛նոքա զիս ձեռք չպիտի ձգէին առանց այն դժոխային հարուածին, բայց դահիճը թող ձախ ձեռքով մի եօթն քաջերու հետ կռուի եթէ կարող է:—Լո՛ւռ, փողոցի ներքեւն մէկը կուգայ, երևի քաղաքացի մի է, թերևս իմ ընկերոջս օգնէ նա:

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԻ

ՆԱԽԿԻՆՆԵՐԸ, ԲԱՂԱՔԱՑԻ ՄԻ

Հարիւրապետ. Կեցէ՛ք, ազնիւ բարեկամ:

Քաղաքացի. Ի՞նչ կայ:

Հարիւրապետ. Եկէք, տեսէք մահամբձ մի որ այստեղ ինկած է, թերեւս կարելի է տակաւին փրկել զինքը: Մարդատէր եղէք և ձեր տունն ընդունեցէք զինքը:

Քաղաքացի. Կարելի է:

Հարիւրապետ. Ինչո՞ւ չէ:

Քաղաքացի. Որովհետեւ կարելի չէ՛:—Ես տունը երեսուն ողջ հիւրեր ունիմ, որոնք ուտելու բան մի չունին, և ոչ ևս աւելի տեղ, մեռեալներն ի՞նչ ընեն:

Հարիւրապետ. Նա մեռած չէ՛ դեռ:

Քաղաքացի. Եթէ մեռնելու վրայ է՛ տեղւոյ միայն պէտք ունի ուր մեռնիլ կարենայ. այժմ այս շփոթութեան մէջ օգնութիւն չի մտածուիր, այստեղ իմ տունէս աւելի հանգիստ տեղ մ'ունի մեռնելու համար. զիս ևս իմ տունէս դուրս վանեցին և Աստուած դիտէ դեռ ուրիշ ինչեր պիտի ընեն:

Հարիւրապետ. Մօտերը վիրարոյժ մի չիկայ:

Քաղաքացի. Աստուած իմ, նոքա ամենքն ևս այնքա՛ն դործ ունին ձեռքերնին, հրապարակը խճողուած է մահամեծներով, ֆրանսիացի թէ աւստրիացի ամենքն ևս իրարու խոնուած:

Հարիւրապետ. Ամբողջ բանակին բաջ զինուորականնեարէն մին է այս:

Քաղաքացի. Եթէ ամենաբաջն իսկ լինէր՝ ևս կարող չեմ իրեն օգնելու:

Հարիւրապետ. Ոսկին ձեր գութը կը շարժէ,—զինքը ձեր տունը ընդունելու համար ի՞նչ կը պահանջէք. բոլոր ունեցածս ձեզի կուտամ:

Քաղաքացի. Ունեցածներդ շատ լինելու չէ՛ անշուշտ:—Բայց եթէ լաւ վճարէք ինձ—կարելի է փոքր խուց մի գտնել:

Հարիւրապետ. Սքանչելի է, սքանչելի:

Քաղաքացի. Այո՛, այս սքանչելի, այն սքանչելի, միայն թէ առաջ ոսկին, ապա թէ ոչ բոլոր սքանչելիներն օգուտ չունին:

Հարիւրապետ. Ահաւասիկ (դրամապանակը կը փնտռէ) Վա՛յ, անիծեալ, բոլորովին յոգացաւ որ զօրքերը լաւ մի կողպտեցին զիս:

Քաղաքացի. Իրամ չկա՛յ ուրեմն:

Հարիւրապետ. Չկայ դրամ. բայց Աստուծոյ վարձատրութիւնը...

Քաղաքացի. Այդ կերպով երեսուն անօթի որսորդ զինուորները չեմ կրնար նոյն իսկ կշտացնել: Քանի որ պարոնը դրամ չունի, ուրեմն զիս հանգիստ թողնելու է:

Հարիւրապետ. Ո՛վ մարդ, մարդկային զգացում չունիս դու բնաւ բո մէջդ:

Քաղաքացի. Ինչո՞ւ չունիմ, և ընդհակառակը դեռ աւել.

ի անիծեալ զգացում մի որ անթուրիւն կը կոչուի. նախ
պէտք է որ կշտանամ ես, յետոյ կարգն ուրիշներուն կուգայ:

Հարիւրապետ. Իւր հայրենեաց համար ինկաւ նա և ա-
րիւնը թափեց ձեզ համար, և դուք ձեր դռներն անգլխաբար
կը փակէք իւր դէմը:

Քաղաքացի. Իրեն օվ ըսաւ որ այդպէս ընէ:

Հարիւրապետ. Իւր պատիւը, իւր կայսրը:

Քաղաքացի. Արեւմտ թող պատիւը զինքը սնուցանէ և
կայսրը բժշկէ զինքը, ինչ չվերարեւի:

Հարիւրապետ. Ամօթ, ամօթ, մարդ մարդու պէտք է
որ օգնէ եղբոր:

Քաղաքացի. Շատ առաջ մ'երթաք, աւելի ձեր վրայ
մտածեցէք, դուք ևս վիրաւորուած էք, զնացէք հրապարակ
վիրաբոյժներուն:

Հարիւրապետ. Տեղ մի չեմ երթար, մինչև որ իմ արիւ-
սիրտ ընկերոջս ի՞նչ լինելը չը զիտնամ—Եթէ օգնութիւն
կարելի է պիտի ընեմ իրեն, իսկ եթէ կարելի չէ գտնէ հայ-
րենակից եղբոր ձեռք մի իւր զիւցազնական աչքերը պիտի
փակէ:—

Քաղաքացի. Ինչպէս որ կը կամենաք, միայն մի բաղ-
ձաք որ ես ձեզ մասնակից լինեմ: Մնաք բարեալ ես պէտք
է տեսնեմ թէ որտեղ կարող եմ չոր հաց և թթու գինի գլու-
նել, որովհետեւ երեսուն շատակներն այնչափ կուտեն մէկ
օրուան մէջ որ զիս մուրադեկ կընեն (կերթայ):

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

ՆԱԽԿԻՆՆԵՐԸ (ԲԱՑԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ)

Հարիւրապետ. Սրիկա՛յ, — Աստուած գիտէ թէ ի՞նչ կը-
նէի եթէ իմ աջ ձեռքս կարողութիւն ունենար և սուրս դեռ
ձեռքս լինէր:— Ո՛ւր էր թէ սուրս ձեռքս լինէր:— Ա՛խ, անի-
ծեալ, երկու ժամուան մէջ ինչե՛ր կընէի:— Այս առաւօտ, իմ
հրամանացս պատրաստ հարիւր քաջ զինուորներու գլուխն էի
կեցած, որոնք իմ ակնաբերիս կը հնազանդէին, և հիմա այսպի-
սի թշուառական մի կը համարձակի հետս այսպէ՛ս վարուել:—
Անիծեալ հարուած:— Եւ մարդն որքան ուրախացաւ երբ սուրը
ձեռքէս ընկաւ: Ո՛հ, սկսաւ վերքս սոսկալի կերպով պրել:—
Դժոխայի՛ն կրակ:— Բազուկս պիտի կորչի:— Է՛ր վերջը ինչ պի-

տի լինիւ—Հատ մի ծերունի հայրեր իրենց միակ որդին դը-
շին տակն—առաջնորդած են, շատ մի անօգնական մայրեր ի-
րենց որդիին, իրենց յետին նեղուկը հայրենեաց զոհած են, ին-
չո՞ւ համար պիտի ցաւիմ իմ մէկ բաղուկս կորսնցնելուս. ինձ
համար հաճելի պիտի լինէր եթէ զիս իմ կեանքէս ևս զրկէին,
և զիտէ Աստուած թէ ես իմ կեանքս իսկոյն և ուրախութեամբ
պիտի տայի իմ սիրելի հայրենեաց, իմ կայսեր, իմ բարի և մեծ
կայսեր համար։—Լուսթիւն, չի՞ շարժեր։—Այո՛, այո՛, կսթա-
փի. աչքե՛րը կը բանայ։—Ընկե՛ր, բարի լինի սթափումդ։—
Խնչ կը նայես պղպէս պիշ պիշ շուրջդ։—Խեղճ գլուխդ
բե՛ր։—Ճանչիր բու զինակիցդ Ես եմ բու բարեկամդ, բու
կայսեր համազգեստն է այս, բու. հայրենեաց զինանշանն է այս։
Փոգե՛րա ենք, կարող ես ազատիլ, զօրապետը պիտի փրկէ զմեզ։

Տեղակալ. Գերի՛ եմ։

Հարիւրապետ. Այո,—Թշնամւոյն իշխանութեան ներ-
քէ ենք։

Տեղակալ. Գերի՛...

Հարիւրապետ. Օ՛ն, պէտք չէ այդչափ յուզուիլ ու գա-
ւել, արդէն ամենաբարի զինուորին ևս կրնայ պատահիլ այս։
Պատերազմի բաղդը զարմանալի կին մի է։—

Տեղակալ. Ինչո՞ւ մեռած չեմ... և ինչու գերի եմ միայն։

Հարիւրապետ. Ե՛հ, աստիճան մի լաւ է։ Մահը փոխա-
նակութիւն չգիտեր։

Տեղակալ. Յաղթուեցանք։

Հարիւրապետ. Ո՛չ, միայն յետ մղուեցանք։ Լաննէ զօ-
րավարը մեծ զօրութիւն ունէր իւր կողմը և մեր զօրավարը
պարտաւորուեցաւ դէպի Սկրիվիա նահանջել։

Տեղակալ. Նահանջ դէպի Սկրիվիա։—

Հարիւրապետ. Կը բաւէ՛.—Այժմ ինչպէ՞ս կուգաս ինք-
զինքեդ, վերքդ շատ կը գաւի։

Տեղակալ. Եթէ դու յաղթութեան աւետիսով արթնցնէիր
զիս՝ կը հաւատայի փրկութեանս։ Այդ, կզգամ թէ հարուածը
մահացու է և այլ ևս ապրել չեմ ուզեր։

Հարիւրապետ. Խնայե՛ կուրծքդ։—Մի՛ խօսիր.—Թերեւս—
հրաշք մի անկարելի չէ՛, կազմդ զօրաւոր է։—

Տեղակալ. Մարմինը մարմնական ցաւերուն դէմ կը դնէ,
բայց հոգեկան վշտերը կը կոտրեն զայն։

Հարիւրապետ. Բաւ է՛, հետեւէ իմ պատուէրիս, մի՛ այդ-
քան խօսիր։

Տեղակալ. Ի՞նչ, այն քանի մի վայրկեանները, որ դեռ ևս պիտի ապրիմ ու ապրիլ կուզեմ՝ համը տանջանք որդամ: Ո՛չ, թող որ բոլոր սրտովս լսեմ իմ հրաժեշտս քիչ, ինձմէ ըստանուող կեանքը յետին ջերմ արեան հոսանքը կը մղէ դէպի կուրծքըս և խօսելու զօրութիւն կուտայ ինձ.— Ի՞նչ եղան մեր ընկերները:

Հարիւրապետ. Ինչպէս որ արդէն ըսի բեղ Սկրիվիս նահանջեցին: Թշնամւոյն ձեռքն են Վաստէճիօն և Փօզեբան:—

Տեղակալ. Ինչպէ՛ս նահանջը պատուաւոր եղաւ.

Հարիւրապետ. Այդ ըսել կո՛ւզեմ:— Գունդերն առիւծաբար կռուեցան: Միայն նոցա թուական առաւելութիւնն ստիպեց որ յետ բաշուինք:

Տեղակալ. Քանչ, սքանչելի ժողովուրդ մի են իմ հայրենակիցներս: Տեսնելու էիր իմ մարդիկս. զիդպններ էին: Ծովու մէջի ապառաժի նման կանգնած: Աստուած վարձատրէ նոցա հաւատարմութիւնը: Երևի իրենցմէ քիչե՛րն աղատեցան:

Հարիւրապետ. Դու յառաջապահներուն մէջն էի՛ր:

Տեղակալ. Այո, եղբայր. երբ այսօր կէսօրին Վաստէճիօ հասանք և կերակուր պատրաստել կուզէինք, լուր եկաւ, ինչպէս որ դիտես թէ Լաննէս մարաջախտը շատ հեռու չէ՛ր մեզմէ և մեր վրայ յարձակիլ կսպառնար: Իմ ձիաւորներու վաշտովս և խուժք մի Լօրկօվեցի թեթեւ ձիաւորներով յառաջ դրնացինք թշնամին զբաղեցնելու, մինչև որ բոլոր զօրագունդը պատերազմի պատրաստ լինէր:

Հարիւրապետ. Իմ գործս այդչափ լաւ չե՛ղաւ:

Տեղակալ. Հուտով նշմարեցի թէ Ի՞նչ պիտի լինի, և տեսայ թէ ամբողջ զօրաբաժնին և թերեւ աւելիին՝ վիճակը խաղի մէջ է. հազիւ թէ Դէյֆիլէի մօտն հասած էի, ո՛ւր պիտի կանգ առնէի՝ երբ Փրանսացւոց յարձակման շարժումը տեսայ: Արդէն այսօր առաւօտունէ իվեր զարմանալի ծանրութիւն մի, և նախազգացում մի կար սրտիս վրայ, կզգայի թէ լքրացեր է ժամանակս և թէ արդէն պարտաւոր եմ պարտքս վճարել մահուան: Երբ դէպի ներքև նայելով ձորին մէջ թշնամւոյն սուրիներու փայլելը տեսայ, մտայ էի թէ այսօր ինձ համար գնդակ մի պատրաստ էր անկէ: Մերձ ի մահ լինելուս զգացումն մղեալ հաւատարիմ տասնապետս կանչեցի, այն ճերմակ պատուաւոր Հայդրիթը, դու կը ճաննաս արդէն, իրեն յանձնեցի գունդին գանձը և իմ դրամապանակս՝ յանձնարարելով որ

մին գնդապետին և միւսն ևս իմ բարի ծնողացս յանձնէ՝ իբրեւ իրենց որդւոյն միակ հարստութիւնը, այն որդւոյն որ իւր կայսեր և հայրենեաց համար ընկաւ։ Այսպէս ծեր մարդը զրկեցի որուն աչքերն արտասուօք ողորում ինչ և որ ծնկաչօք կաշաէր ինձ մահուան վտանգին ննթարկուելով իմ մօտս կենալ։ Բարի՛ պատուաւոր Յովսէփը—նա ևս կը դուշակէր կարծես իւր տեղակալին գլխուն գալիքը։ Հին բարեկամէս հրաժեշտ առնելս կարծածէս աւելի դժուար եղաւ, ֆրանսացւոց հրացանի հարուածները ճիշտ ժամանակին արթնցուցին զիս։ Այլ ևս վճռուած էր. իմ մարդիկս վարազի նման կոռւեցան և քայլ մի յետ չընկրկեցան։ Թշնամեաց զիականբըր կը զիլուէին մեր առաջը, որովհետեւ իմ զօրքերս լաւ նշան կառնէին, բայց իմ շուրջս ևս շատերն ինկան։ Իմ սպաներս առաջիններուն հետն էին։ Վերջապէս մէկ ժամուան կոխէ մի յետոյ, դեռ կանգնած էի տասնեմէկ հողիով, իննըսունէն տասնումէկ հողի մեր վրայ խուժող թշնամեաց դէմ, զետին ինկայ և այլ ևս չեմ զիտեր թէ անկեց վերջն ինչ պատահեցաւ։ Քու բազկացդ մէջ արթնցայ առաջին անգամ։

Հարիւրապետ. Այդ բանին վրայ կարող եմ տեղեկուած լին տալ բիչ։ Քու մարդիկդ յետ բաշուեցան երբ զիրենք կռուի մղողն ինկաւ։ Շտամբախ և Օտտենլինֆէլդ տեղակալները, որոնք թշնամւոյն մէկ ուրիշ կողմէ նետուելով մօտդ փութացին՝ վերդուցին զքեզ և հետու տեղ մի տարին, մինչև որ ֆրանսացւոց հծծելազօրքէն զիմաւորուած պարտաւորեցան քու ճակատադրիդ յանձնել զքեզ։ Թշնամիք ուղեցին զքեզ կողպտել, մօտակայ թաւուտէն մի քանի խրուատներ դուրս ելան, ետ քեցին զանոնք, իրենց հրացաններու վրայ պառկեցնելով զքեզ Կաստէճիօ բերին, ուրկէ ֆ—Մ—Լ. Օրայլի կոմսը զքեզ ֆօգէրա զրկեց նասունդորֆ հուզարացի մարգու մի ձեռամբ։ Սա ևս պատահեցաւ որ քու օրուան պատմութիւնդ շարունակողը եղայ ես։

Տեղակալ. Եւ դու ի՞նչ եղար։

Հարիւրապետ. Թէեւ քո զիւցազնական զոհողութեամբ մենք ի վիճակի էինք վերականգնելու, բայց սմէն կողմէ մեր վրայ խուժող մեծ ուժին դէմ չօւղեցինք զիմադրել։ Թողուցինք Կաստէճեօն և ֆօգբերա դարձանք։ Աջ ձեռքս հրացանին հարուածը մեծ դրան մօտն ստացայ, զերի ընկայ, ինքզինքս այստեղ քաշ քեցի, քեզ գտայ և անմիջապէս որոշեցի քեզ հետ միասին

ապասել մեկ սահմանուած ճակատագրին:

Տեղական. Ի՞նչ վիրաւորուած ես, վտանգաւոր չըլինի
Հարիւրապետ. Չեմ կարծեր.

Տեղական. Վերքդ կապուած չէ՞ դեռ.

Հարիւրապետ. Ո՛չ.

Տեղական. Ուրեմն աճապարէ.

Հարիւրապետ. Ոչ.

Տեղական. Քու վարանումդ կրնայ մահացու լինել քեզ:

Հարիւրապետ. Նախ պէտք է զիտնամ թէ դու ի՞նչ պի-
տի լինիս.

Տեղական. Ով բարեկամ, ահա կը մեռնիմ ես:

Հարիւրապետ. Ստոյգ չէ՞ այդ. կարելի է ազատիլ.

Տեղական. Ոչինչ կարելի է ինձ, և ես ևս կուզեմ ոչնչանալ:

Հարիւրապետ. Ոճրագործութիւն է այդ.

Տեղական. Քու կայսերդ միշտ քաջ սպայ մի եղիր.

Հարիւրապետ. Նորա համար պիտի մնամ այստեղ.

Տեղական. Ո՛չ, նորա համար պէտք է որ գնաս դու—

Մի՛ թողուր ինձ այն դռն զգացումը թէ՛ իմ վարանկոտ մա-
հաւամբս բուկդ փութացուցի—Արեւ դեռ մայր չի մտած, վեր-
ջացած եմ ես:

Հարիւրապետ. Գոնէ իմ ձեռքերս պիտի կարենան աչ-
քերդ փակել:

Տեղական. Իմ հայրենեացս հրեշտակը կը փակէ իմ աչ-
քերը:

Հարիւրապետ. Արդէն երեք ժամէ ի վեր՝ մօտդ նըս-
տած եմ:

Տեղական. Բոպէ անգամ մի կորսնցներ այժմ և փրկէ՛
զքեզ:

Հարիւրապետ. Եթէ կարենայի՛ր քեզ օգնել.

Տեղական. Օգնութիւն չկայ ինձ համար, գնա՛ և թող որ
խաղաղութեամբ մեռնիմ.

Հարիւրապետ. Եղբայր իմ:

Տեղական. Գնա և փրկէ զքեզ: Ծեր հայրդ կ'ապրի տա-
կաւին, ապառէ զքեզ նորա համար, ազատէ զքեզ քո հայրե-
նեաց համար.

Հարիւրապետ. Ի՞նչ կարծեմ ես երբ դու կը մեռնիս:

Տեղական. Գնա և իմ ողջոյններ տուր իմ բարեկամաց.

Հարիւրապետ. Կենաց յոյս չունի՛ս բնաւ.

Տեղակալ. Բնաւ. ազատէ զբեղ.—

Հարիւրապետ. Անգամ մի ևս սեղմէ ձեռքս, աջս կը
ցաւի պէտք է ձախովս դո՛հանամ:

Տեղակալ. Եղբայր իմ...—մնաս բարեաւ.

Հարիւրապետ. Բու հոգեարքիդ ժամանակ Աստուած
մեիթարի զքեզ—Մնաս բարեաւ Կը մեկնի:

ՏԵՍԻԼ ՉՈՐՐՈՐԴ

ՏԵՂԱԿԱԼԸ (առանձին)

Տեղակալ. Վերջին հրաժեշտը:—Մահ, չեմ սարսափի-
րենէ, բայց երբ կ'ստածեմ թէ վերջին մարդկային աչքն էր
որ ինձ նայեցաւ՝ հոգիս կը զարհուրի:—Իմ հաշիւս փակուեցաւ
ուրեմն, իմ կրակս կ'աւա:—Աստուած իմ, դու մեիթարէ իմ
բարի ծնողքս, երբ իմ ժառանգ թողածս՝ պատուաւորն Հայդ-
րիկ նոցա տանի:—Հանգիստ եմ փառք երկնից, կեանքէ ի
մահ փոխուելու վայրկեանին չեմ վախնար:—Երբ դպրոցն եղած
ժամանակ Հորասը կը թարգմանէի՝ չէի մտածած թէ dulce
pro patria mori ես իմ վրաս պիտի կարենայի փորձել:—
Այո՛, Այո՛, վկայ Ամենակարողն, անմահ երգիչն իրաւունք ունի,
քողոր է իւր հայրենեաց համար մեռնել:—Ո՛հ, երանի՛ թէ
այժմ կարենայի իմ ժողովրդեանս բոլոր մատղաշ ու հաւատա-
րիմ սրտերուն գլուխ կենալ, և ինձմէ խոյս տուող կենացս
վերջին զորութեամբն նոցա հոգւոց մէջ թնդացնել Վաղցր է՝
հայրենեաց համար մեռնել:—Մահը ահաբի չէ՛ երբ դժ-
գոյն ձակտին բոլորտիքը արիւնդուշտ դափնիներ կը հիւսէ:—
Եթէ այս բանը գիտնային այն սառնասիրտ եսասէրները,
որոնք վառարաններուն ետեւ կը սպրդին՝ երբ հայրե-
նիքը առ դուռ կը կոչէ իւր որդիքը, եթէ այս բանը
գիտնային այն վատ, ցած հոգիները, որոնք ինքզինք-
նին խոհեմ կը համարին, իրենց խօսքերով ցուցնելով
թէ առանց իրենց ևս կրնայ լինել, ասելով թէ երկու բաղուկ
առաւել կամ նուազ լինելով՝ յաղթութեան նժարին հաւար օ-
գուտ մի չունին, և ինչ որ ողորմելի պատուարներէն աւելի
է՝ երանի՛ թէ ըմբռնէին այն երանութիւնը զոր կ'զգայ արի
զինուոր մի, երբ արդար դատին համար իւր արիւնը կը թա-
փէ, այն ժամանակ կարգի կը մտնէին նրանք: Անշուշտ առանց

նոցա ևս կրնայ լինել, իրաւ է որ երկու բազումներ որոշիչ հարուած մի չեն տար գործին, բայց հայրենիքը միևնոյն իրաւունքը չ'ունի՝ իւր ամէն որդւոց վրայ։ Եթէ գիւղացին պարտաւոր է իւր արիւնը հեղուլ, եթէ քաղաքացին իւր որդիքը կը նուիրէ, ո՞վ կրնայ բացառութիւն մի կազմել։ Հայրենեաց ազատութեան և պատուոյ սեղանին վրայ զոհաբերեալ մահը որքան վսեմ է նոյնքան և անարժան են շատ վատերը։—Ի՞նչպիսի դրոշ փութացէ՛ք, երբ ձեր ներքին ձայնը կը մղէ զձեզ։—Թողէ՛ք հայր, մայր, կին, զաւակ, բարեկամ և սիրելի ամէնքն ևս հաստատակամութեամբ. ձենէ հեռու մղեցէ՛ք նոցա, երբ կուզեն բռնել, արգելել զձեզ որ չերթաք։—Սրտին մէջ առաջին տեղը հայրենիքն է։—Ի՞նչ կըզգամ.—այս սուրբ բառերո՞վ պիտի հրաժեշտ առնէ ինձմէ անվեհեր հոգին։—Կը տկարանամ, —ձայնըս կը նուաղի։—Աստուած իմ, հայր իմ, թո՛ղ քու կամքդ լինի, պատրաստ եմ (Կանգզայանայ)։

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՆԱԽԿԻՆԸ. ՏԱՍՆԱՊԵՏԸ (Թեր ասուհով փաթաթած, շատ տաքցած եւ թուլացած է, բայց ճիգ կընէ մինչեւ որ իւր զօրութիւնը վերջապէս աստիճանաբար կը հաւաքէ։)

Տասնապետ. Հաղիւ կրնամ քալել։ Եթէ շուտով անմիջապէս չգտնեմ զինքը, իմ բոլոր ջանքերս ի դերեւ պիտի ելնեն։ Ծեր ոսկորներս կարծես կը ջախջախուին։ Հրապարակին վրայ հարիւրաւոր մեռեալներ կան, բայց իմ բարի տեղակալս չկայ նոցա մէջը։—Բազուկիս հարուածն ևս սաստիկ այրել կը սկսի։—Բայց իմ մարդիկս դասայիք կարծեցին զիս։ Ես դասալիք լինիմ։—Ե՛ս. երեսուն և հինգ տարի է արդէն որ իմ հայրենեացս, կայսերս կը ծառայեմ, և ե՛ս դասայիք լինիմ։—Անգամ մի որ իմ տեղակալս աղատեմ, յետոյ դարձեալ իմ դրօշիս ճամբան պիտի երթամ արդէն։—Ի՛նչ կը տեսնեմ, մեր գունդէն սպա՛յ մի։—Աստուած իմ, իմ տեղակալս է, իմ տեղակալս է։—(Մորա մօտ կը նետուի) Ընորհակալ եմ քեզ, Ամենակարող Տէր, գտնուեցա՛ւ, մօտս է դարձեալ։—Այո՛, վերստին կը գտնեմ զինքը, բայց ինչ վիճակի մէջ։—Մեռած, —մեռած։—Ո՛չ, ո՛չ չկրնայ մեռած լինել, պէտք է՛ որ մեռնի։—Իւր դիակը գտնելու համար Աստուած յաջողեց իմ յանդուգն գործս.—պէտք է որ կրկին արթննայ որպէս զի գոնէ կարենամ

իւր աչքերը ես փակելիւ—Քակեմ վզկապը, հա՛ պոսպէս.—Արդ տեսնեմ ուրտեղ կարող եմ ջուր գտնելիւ—Աստուած իմ, ծեր մարդուկս, զիս մի՛ յուսահատեցնիրիւ—(Անապարանօք կերթայ) Տեղակալ. (Կսթափի) Աստուած, սակայն դեռ չպիտի՞ մեռնիմ. դեռ ո՛չ—մահ, փութայ, շուտ վերջացուր.—որքան պիտի տանջուիմ տակաինիւ:

Տասնապետ. (Իւր սաղաւարտը ջրով լեցուած կը դառնայ) փա՛ռք Աստուծոյ, ջուր գտայ:

Տեղակալ. Ի՞նչ կը տեսնեմ—Հայդիրի՛ս—Պէտք էր որ բեկմէ՛ ևս խարուէիւ—Վայ, ամօթ:—Դասալիք...

Տասնապետ. Աստուած իմ, կը շարժի.—կապրի՛. պ. Տեղակալ, իմ սիրեցեալ Տէրս: Ո՛հ ինչ ուրախութիւն.—

Տեղակալ. Հեռու յինէն, յետին բոպէս մի դառնացներ.

Տասնապետ. Ամէն նեղութիւն մոռցայ:

Տեղակալ. Գերի՛ բռնուած ես...

Տասնապետ. Ո՛չ, պ. Տեղակալ:

Տեղակալ. Ի՞նչպէս եկար այստեղ:

Տասնապետ. Փառք Աստուծոյ.—Դասալիք եղայ.—

Տեղակալ. Հեռո՛ւ, վահ իմ մահուանս ժամուն անիծել մի՛ տար ինձ:

Տասնապետ. Յանուն Յիսուսի, ի՛նչ եղար, պ. Տեղակալ:

Տեղակալ. Թշուառ հոգի.—Ի՛նչ դուկադներով լեցուն ձեռք մի կարողացաւ բեզ մոլորցնել և քո երեսունհինգ տարուոյն հաւատարմութիւնը խայտառակութիւն հանել. հեռու, հեռու, հեռու աչքերէս:

Տասնապետ. Պ. Տեղակալ... Շատ խիստ էք: Աստուած վկայ որ ես արժանի չեմ այդչափին:

Տեղակալ. Իրաւունք ունիս: Գլխուդ առաջակողմին զընդակի մի արժանի ես, դասալիք:

Տասնապետ. Եթէ՛ զիտնայիք թէ՛ ինչո՞ւ դասալիք եղայ:—

Տեղակալ. Եւ ոչ մէկ ստահակ այնքան ապուշ է որ իւր ցածութեան պատճառ մի չը գտնէ:—

Տասնապետ. Պ. Տեղակալ, իմ ձեռքիս ստացած հրացանի հարուածս զաւ կը պատճառէ ինձ, բայց ձեր բառերով՝ իմ սրտիս խոցուածը տա՛ն անդամ աւելի ցաւ կը պատճառէ:—

Տեղակալ. Մարդուկ, պատուաւոր աչքեր մի՛ կեղծիր, իմ

առաջ և ստահակութիւնդ ազատապէս ցոյց տուր, բռնուած և վիրաւորուած եմ ես և բեղ բան մի չեմ կարող ընել.

Տասնապետ. Պ. Տեղակալ, ծեր պատուաւոր մարդու մի սիրտը այսպէս մի՛ վիրաւորէք, ես դասալիք եղայ, ճիշտ է, բայց ձեզ փրկելու համար էր այն: Ձեր բոլոր դրամն իմ մօտըս է, որով կարելի եղածին չափ շուտ կարող եմ օգնել Ձեզ:—
Տեղակալ. Մարգ...

Տասնապետ. Կերպնում յանուն Աստուծոյ ամենակարողին, այս մահամեծ վիճակիս մէջ, որ դորա համար եկայ և դորա համար ստացայ զնդակի հարուածը բաղկիս...—ինչպէ՛ս. կը կարծէ՞ք որ կարելի է ազատել զձեզ:

Տեղակալ. Հայդրիի.—

Տասնապետ. Անարգ դրամին համար թողո՞ւմ ես իմ կայսրս:—Ի՞նչ.—պ. Տեղակալ, այս խիստ ծանր եղաւ.—

Տեղակալ. Ո՞վ բարեկամս, ով իմ ընկերս,—հիմայ ի՞նչ ըսեմք բեզ, ինչպէ՛ս պիտի կարենամ դարձեալ բարւոքել ըսածս:

Տասնապետ. Արդէն ամէն ինչ առջի վիճակն է դարձեալ. բաւական է որ պ. Տեղակալ բարեկամական աչքերով նայի ինձ կրկին, և զիս վաղեմի հաւատարիմ Հայդրիի կոչէ:

Տեղակալ. Վաղեմի՛ հաւատարիմ Հայդրիի.

Տասնապետ. Հա՛, այսպէս, պ. Տեղակալ, այսպէ՛ս,—այժմ թողէ՛ք որ ես իմ գործս տեսնեմ.—Ամենէն առաջ կա. կուղ անկողնոյ մի պէտք ունիք և յետոյ երթամ վիրաբոյժ կանչեմ: Լաւ, խիստ լաւ խնամքներ, այս ամէնն ևս պիտի կատարուին: Ես և ոչ մի գիշեր պիտի հեռանամ Ձեր անկողնի մեարէն:

Տեղակալ. Հաւատարիմ սի՛րտ:

Տասնապետ. Թողէ՛ք որ գործեմ ես—Այն տունը բաւական մեծ կերէի: Տնեցիներն աւարառու ֆրանսացիներէն վախնալնուն փակուած են: Արդէն պիտի ստիպուին բանալու:—Բայց պ. Տեղակալը զիս դրամի համար իբր դասալիք մի բըռնել չպիտի տայ: Չպիտի ընէ այդ բանը:—

Տեղակալ. Ո՞վ իմ հին բարեկամս, ներէ ինձ:

Տասնապետ. Հատոնց ներուած է արդէն, չարժեք խօսել, այլևս—Իմ բարի պ. Տեղակալս էք:—Օ՛ն, շո՞ւտ դէպի դուռը. (կր ըսողիւ) Օ՛ն, բացէ՛ք, իմ մահամեծ տեղակալիս պէտք է օգնել. բացէ՛ք, յանուն ամենայն սրբութեանց կաղաչեմ ձեզ բացէք, զթացէք:—

Տեղակալ. Ոչ որ կրէ դեպ:

Տասնապետ. Նոքա շատ լաւ կը լսեն զիս, միայն թէ կը վախնան:—Ներսէ փսփոցի ձայներ կը լսեմ:—Գթասիրտ եղէք, բացէք, մահամերձ մի զձեզ կը գոչէ: Բացէք դուռը:—Անիծեալ, եթէ անուշութեամբ չի՛ լինիր, զինուորական կերպով փորձենք ուրեմն:

Տեղակալ. Օգուտ չունի:

Տասնապետ. Օգուտ պիտի ունենայ:—Գլուխնուդ կործանի երկինքը, բացէք դուռը, ապա թէ ոչ կը խորտակեմ զայն, այն Ժամանակ ամէնքնուդ ևս Աստուած ողորմի: Բացէք:—Եթէ ձեզ իմ մահամերձ տեղակալս յարգել պիտի սորվեցնեմ:—Բացէք եթէ ոչ կը կտորեմ:

Տունէն. (ծայն) Անմիջապէս պիտի բացուի միայն թէ խնայեցէ՛ք մեր կենացը:—

Տասնապետ. Տեսէք, պ. Տեղակալ, օգուտ ունեցաւ արդէն:—Ձեզ համար բան մի չկայ: Միայն թէ բացէք դուռը, Օ՛ն, շուտով պիտի՛ բացուի:—

Տունէն. (ծայն) Անմիջապէ՛ս, իսկոյն:

Տասնապետ. Քաջասրտութի՛ւն, պ. Տեղակալ, բանալին արդէն փականքին մէջ կը դառնայ:—

Տեղակալ. Բայց աղատութիւն չկայ ինձ համար.

Տասնապետ. Գոնէ մեղմացնում մի է:

ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԻ

ՎԱՃԱՌԱԿԱՆԸ (տունէն) ՆԱԽԿԻՆՆԵՐԸ.

Վաճառական, Ինչո՞վ կրնամ օգնել, որչափ որ կարող եմ կուզեմ օգնել ու ամէն բան ընել:—

Տասնապետ. Պարոն, մահացու կերպով վիրաւորուած այս սպան ձեր տունը ընդունեցէք. բժիշկ մի գտնել փութացէք և դորա համար ինչ որ կրնամ տալ, այս քսակն՝ ամէն ևս ձեզ կը վերաբերի:

Վաճառական. Աւստրիացի էք դուք.

Տասնապետ. Գերի և վիրաւորուած Աւստրիացի:

Վաճառական. Ո՛հ, որքա՛ն սիրով կուզէի օգնել, բայց չեմ կարող.

Տասնապետ. Ինչո՞ւ չէ.

Վաճառական. Թշնամիները քաղաքն են, կրնամ —
Տասնապետ. Անպատեհութիւններ ունենայ. Վա, պա-
րոն, անպատեհութիւններն ինչ կրնշանակեն ձեզ համար, եթէ
դուք մարդ մի պէտք է փրկէք:

Վաճառական. Բայց —
Տասնապետ. Ոսկին բաւական չէ՞ ձեզ — հարիւր դուկա-
տէ աւելի է:

Վաճառական. Ամէն բան լաւ, բայց —

Տասնապետ. Բաւական չէ՞ —

Վաճառական. Ոսկին —

Տասնապետ. Օ՛ն, աւելի դրամ չունիմ, բայց — ահա ա-
սիկ արծաթեայ ժամացոյց մ'ունիմ, իմ բոլոր ստացուածքս այն է,
առէք և ազատեցէ՛ք իմ տեղակալս:

Վաճառական. Վեհանձն մարդ.

Տեղակալ. Ով իմ Հայդրիի. հաւատարիմ սիրելի Հայ-
դրիի:

Տասնապետ. Աւելի երկար մի՛ մտածէք, առէ՛ք. — Այլ
ևս պէտք չո՛ւնիմ ես անոնց. իմ ժամանակս շատոնց վերո-
ջացաւ:

Վաճառական. Պ. Տասնապետ, սքանչելի մարդ մի լինե-
լու է Ձեր Տեղակալը, որ այսքան հաւատարմութեան արժանա-
նայ. Պահեցէք Ձեր դրամը, պահեցէք Ձեր ժամացոյցը. Եր-
կուքնիդ ևս կ'անեմ տունս, և այդ պատճառաւ ինչ կուզէ
թո՛ղ պատահի ինձ: —

Տասնապետ. Տուէք Ձեր ձեռքը, քաջ պարոն: — Փառք
Աստուծոյ, Տեղակալս պիտի ազատի.

Վաճառական. Քանի որ դուք մարդ էք՝ այդ իսկ կը
բաւէր ինձ, բայց դուք աղնիւ մարդիկ էք, մանաւանդ. Աստ-
րիացի էք, և ինձմէ աւելի սրտանց Աւստրիացի ոչ որ կայ: —
Իմ տունս բաց է ձեզ համար:

Տասնապետ. Այո պարոն. փառք Աստուծոյ Աւստրիացի
ենք մենք, այո դեռ ևս Աւստրիացի ենք, բայց մի գուցէ պա-
տերազմի հետեանօք ուրիշ զինանշան կանգնուի այստեղ. այնու-
ամենայնիւ մի երկրացի կը մնանք...

Վաճառական. Թող այնպէս լինի: — Արդ, թողէք որ
դՁեզ փոխադրենք, պ. Տեղակալ, յետոյ երթամ վիրաբոյժ մի
բերեմ որպէսզի Ձեր վերքերը կապէ:

Տեղակալ. Այսու հանդերձ ազատ թողէք զիս, ինձ հա-

մար աւելի յաւելէ մաքուր օդին մէջ մնալ քան թէ այն նեղ սենեակին մէջ, այստեղ թողէք զիս, մինչև որ վերաբոյժը որոշէ իմ ապրելուս կարելի լինելը: Եթէ պիտի մնունիմ աւելի կը բաղձամ այս գեղեցիկ երկնից ներքև մնանել:

Վաճառական. Ես կերթամ վերաբոյժը բերելու—Պ. Տասնապետ, տուն մտէ՛ք. և քիչ մի զովացուցիչ ըմպելի առէք: Զաւակներս եթէ աւատրիական դրոշագոյնները տեսնեն ինչ որ ունին Ձեզ կը բերեն:

Տասնապետ. Հուտ վերաբոյժին գնացէք.

Վաճառական. Հինգ վայրկեանէն իրեն հետ պիտի գամե (կը մեկնի):

ՏԵՍԻԼ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՏԵՂԱԿԱԼԸ, ՏԱՍՆԱՊԵՏԸ.

Տեղակալ. Ազնիւ Հայդրիս, տունը մտիւր և զորացի՛ր. ինձ այնպէս կը թուի թէ ճիգ կընես—ծերացած ես Յովսէփ, չարածճիւղութեամբ մի՛ տկարացնէր անձդ:

Տասնապետ. Հոգ մի՛ ընէք, պ. Տեղակալ, կազմա դորաւոր է, հրացանին գնդակը այստեղը կայրէ միշտ, բայց չէ կարող կեանք մ'արժեւել:

Տեղակալ. Աստուած իմ, բու վերքդ. ինչպէս կարողացայ մօռնալ զայն:

Տասնապետ. Ոչինչ է, միայն բսուելով անցած հարուած մի է, այնպիսիներ խիստ շատ ունիմ մարմնոյս վրայ—բայց ներս երթամ այժմ և ձեզ թարմ ըմպելի մի բերեմ, կը զօրացնէ զՁեզ, բայց նախ անգամ մի ևս ձեռքերնիդ ինձ տուէ՛ք այսպէս: Սրտանց շնորհակալ եմ, պ. Տեղակալ, Դուք քա՛ջ, շատ քա՛ջ Տէր մ'էք, և եթէ հարկ լինէր իմ կեանքս ևս զոհել, պէտք էր որ կրկին գտնէի զՁեզ—Երկինք հասկցաւ զայս և չթողուց որ ձեր պատերազմիկ մի յուսահատի՛ որ իւր դրօշին և իւր կայսեր համար այնքան պատուաբեր կը համարէ զայն. (Տուն կը մտնէ):

Տեղակալ. Ազնի՛ւ, հիանալի սիրտ և ինչպէս չկարողացայ ճանչնալ զքեզ: Այն մտածումը թէ երկնից ներքեն այսպիսի մարդեր կը բնակին՝ դարձեալ արեգական լոյսը վայելելը ցանկալի կերևայ ինձ:—Եւ ինչո՛ւ չուզեմ ապրիլ: Ինչո՛ւ անծեմ կեանքն, որ թերևս բազմաթիւ երջանկութիւններ ծաղ-

կեցնէ ինձ համար, և ուր թերևս ես կարենամ սկսիլ և աւարտել շատ բարութիւններ:—Միթէ պատերազմ մի կորսնցնելով ամեն ծրագիր ի դերև ելած կը նկատուի:—Վկայ յաւիտենական Աստուածն որ դեռ ես կզգամ թէ իրաւունքներունիմ աշխարհի մէջ, դեռ կենաց վճռին մէջ ձայն մունիմ: Ով որ իւր շուրջն իրեն սրտակից անիւ անձեր կը տեսնէ՝ նա անշուշտ ակամայ կը դիմէ իրենց մօտէն դէպի գերեզմանին առանձնութիւնը:

Տասնապետ: (Եիշ մի գինի եւ գաւաթ առած տունէն դուրս կելլէ): Ահա ասիկ գինի, պ. Տեղակալ, թարմ և զօրացուցիչ ըմպելի մի: Ձեր երակներուն մէջ նոր կրակ պիտի թափէ: Օ՛ն առէք—հա, այսպէս ախորժեցմբ:

Տեղակալ: Կաղաւթի, սքանչելի է: Բայց դու խմեցի՞ր արդէն:

Տասնապետ: Ես կարող եմ սպասել:

Տեղակալ: Ձեմեցի՞ր արդէն, ինչո՞ւ:

Տասնապետ: Ծարաւ չէ իմ զգացածս, յոգնութենէ եկած ծարաւը յագենալէն յետոյ դարձեալ կուգայ:

Տեղակալ: Լաւ նստէ՛—տենդ ունի՞ս:

Տասնապետ: Աստուած պահէ:

Տեղակալ: Ուժպ մի ևս տուր ինձ—լա՛ւ, շնորհակալ եմ: —Վերջապէս հիմա պատմէ ինձ ինչպէս Քօզերա եկար:

Տասնապետ Սկրիվիայէն անցած էի արդէն երբ լսեցի մեր գունդին բոլորովին նահանջելը: Հիմա պէտք է որ քու Տեղակալիդ երթաս դու, այս էր իմ առաջին մտածումս:

Տեղակալ: Էգնիւ ընկեր:

Տասնապետ: Այն ժամանակ աջիս վրայ դառնալով, յետ դարձայ և ամէն անցնող զօրագունդերուն մերիններուն վրայ տեղեկութիւն խնդրեցի մինչև որ վերջապէս գտայ զիրենք: Ո՛ւր է իմ տեղակալս գոչեցի: Մեռաւ, աղաղակեց մէկն ի պատասխանի: Մեռաւ, գոչեց ուրիշ մի, ես իրեն իյնալը տեսայ:—Իւր զօրագունդէն ութսուն հոգիով կիրճին մէջ ինկաւ, Աստուած միթ՞արէ զինքը՝ գոչեց երրորդ մի: Սիրտս կը մահանար, բայց միշտ կըյուսայի դեռ, զիտէի թէ քանի հոգիներ որոնք մեռած կարծուած են՝ կապրին դեռ:

Տեղակալ: Հատ լաւ բան մի չէ այդ:

Տասնապետ: Վերջապէս մեր գունդէն մի մարդ տեսայ, «Ո՛ւր է մեր Տեղակալը» գոչեցի իրեն: Վերջապաւ, գնաց

նա կուռին միջոցին, դաշտին վրայ մեռած ընկնելէն վերջ առին տարին զինքը:» Այս էր պատասխանը: Բայց նշյնպէս դեռ կորսուած չէի կարծեր զՁեզ, հաստատ կերպով վստահ էի թէ դուք կենդանի էիք դեռ: Ո՛հ, յիմարի պէս կը վազէի բոլոր կարգերուն մէջէն, «Չտեսնա՞ք իմ Տեղակալս, այս էր միշտ իմ հարցումս: Ամէն տեղ մեռաւ, կամ «ո՛չ» բառ մի կը լսէի:— Արդէն յուսահատել կսկսէի, երբ վերջապէս սրնթաց հասնող հուսար մի գոչեց թէ մեր զօրագունդէն սպայ մի կը գտնուի Փօգերայի մէջ, մահացու կերպով վիրաւորուած և հաւանաբար արեւուն մայր մտնելը չպիտի կարենայ տեսնել:— Դուք լինելու էիք այդ սպան, անմիջապէս որոշում տուի զՁեզ փրկելու, մինչ իսկ եթէ իմ կեանքս ևս վտանգի մէջ լինէր:

Տեղակալ. Վեհանքն մարդ:

Տասնապետ. Հազարապետին յանձնեցի գնդի գանձը, երբ նշյն պահուն այնտեղէն կանցնէր, և ես շուտով Սկրիվիա վերադարձայ: Այնտեղ մեր գնդին յառաջապահներուն մէջէն սղոսկեցայ, հոսանքին մէջ նետուեցայ և լողալով անցայ:

Տեղակալ. Հայդրի՛խ, Հայդրի՛խ: Եթէ երբեք բու այդ ըրածդ մոռնամ—

Տասնապետ. Բաւական է, պ. Տեղակալ, բաւական է: Գետեղերբին վրայի մեր մարդիկը, որոնք զիս դասալիք կը կարծէին՝ վրաս կրտկ ըրին: Հարուստներէն մէկը թեխս հանդիպեցաւ, բայց ի՛նչ եղաւ, ես անցայ:— Ե՛ս դասալիք, ե՛ս փախչեմ: Տէրն երկնքէն կայրակով պէտք էր որ զիս այնտեղէն իսկ սպաննէր եթէ ես, ծեր մարդուկս՝ ես խաբեքայութիւն ընել ուզէի:

Տեղակալ. Եւ ես կարողացայ այդ համարումն ունենալ բու մասիդ:—

Տասնապետ. Անիծեալ սատանան, այո. բայց, պ. Տեղակալ, յիշաւի ես արդէն մոռցած եմ այդ, ապա թէ ոչ չպիտի պատմէի:— Վարձ խօսքով անկէ անցայ. «qui vive (ո՛վ է) գոչեց Քրանսիացի յառաջապահ մի, «դասալիք» պատասխանեցի և առանց արգելքի թողուցին որ անցնեմ: Աւելի կը վազէի քան թէ կը քայլէի: Այսպէս Փօգերա հասայ, ուր երկար ժամանակ հրապարակին վրայ գտնուող մեռելաբերու և մահամերձներու մէջ իլուր փնտռեցի, մինչև որ օրհնեալ բաղուր այս փողոցը բերաւ զիս: Եւ հիմա դարձեալ մօտս էք դուք և պիտի աջատիք:— Տէր իմ, սրտանց և սիրով պիտի մեռնիմ՝ եթէ ստու-

գուհիմ թէ իմ տեղակալս հանգիստ, ապահով վիճակ մի պիտի ունենայ:

Տեղակալ. Բարեկամդ իմ, յաւիտեան երախտապարտ եմ քեզ:—Տո՛ւր ինձ ձեռքդ—ո՛հ ի՞նչ կըսեմ—[Թոյլ տուր որ աւելի եղբայրաբար գրկեմ զքեզ, ով դու պարկեշտ և ուղիղ սիրտ: Եկո՛ւր:—

Տասնապետ. Պ. Տեղակալ.—

Տեղակալ. Եկուր, պատերազմի ընկեր:

Տասնապետ. Պատշաճ չէ այդ:—

Տեղակալ. Խեղճատակ ձեւեր մի՛ ընեք և եկուր իմ սըրտիս վրայ, ծե՛ր տղայ:

Տասնապետ. Լաւ, բանի որ այսպէս պէտք է լինի (կը գրկէ զինքը) Սիրելի Տեղակալ, մի՛ ծաղրէք զիս, բայց Ձեր բոլոր տուկատներու տեղ համըրր չեմ տար:—

ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ

ՆԱԽԳԻՆՆԵՐԸ, ՎԱՃԱՌԱԿԱՆՆ ԵՒ ՎԻՐԱՌՈՅԺԸ.

Վաճառական. Ահա՛, բարեկամ, եթէ օգնել կարող ես դեռ՝ օգնէ, պատուաւոր մարդ մի է այս:

Վիրաքոյժ. Իւր զգեստէն կը հասկընամ այդպէս լինելը:—

պ. Տեղակալ.

Տեղակալ. Կուզէ՞ք օգնել ինձ—

Վիրաքոյժ. Որքան որ կարող եմ:

Տասնապետ. Միայն թէ շո՛ւտ, շո՛ւտ, կորսնցեւու ժամանակ չկայ:—

Վիրաքոյժ. Ո՛ւր է վերքը:

Տեղակալ. Ահա այստեղ.

Վիրաքոյժ. Արիւնհոսութիւնը զօրաւոր էր:—

Տեղակալ. Այդ մասին բան մի չեմ գիտեր, որովհետեւ կէս ժամ է որ դարձեալ սթափեցայ: (Վիրաքոյժը նորա մօտ ծնկաչոր՝ վերքերը կը քննէ)

Տասնապետ. (Վաճառականին) Պարոն, ինչպէ՞ս կը գտնէք զինքը, մտածկոտ կերպարան մ'ունի—պիտի աղատի՞ իմ սիրեցեալ Տեղակալը:

Վաճառական. Այո՛, կը յուսամ, վիրաքոյժին կերպարանը մտածկոտ չերևիր ինձ,—և թէ այս երիտասարդը շատ

ճարպիկ է իւր արհեստին մէջ. քաջ սպային կեանքն ազատելու համար ամէն միջոց պիտի գործադրէ:

Տասնապետ. Ես ինչո՞ւ այս բանն ես չեմ կարող ընել: — Տէր Աստուած ժամանակ պիտի հասկընայի— երջանկութիւն մի պիտի լինէր.— պարոն, հարցուցէք.— ինչ որ կը մտածէ, արդեօ՞ք կը կարծէ որ.—

Վաճառական. (Վիրաւորոյթին) Լաւ, վերջը՝.

Վիրաւորոյթ. Վտանգաւոր է, բայց ազատելը հաւանական է կարծեմ թէ կարող եմ ապահովացնել թէ պ. Տեղակալը խուսափեցաւ վտանգէ:

Տասնապետ. Յաղթութի՛ւն. իմ Տեղակալս ազատեցաւ — . — Սիրելի դօքտոր, ճշմարիտ է — — փառք յաղթութիւն. Արդ շնորհակալ եմ, մեծդ Աստուած, որ ունեցած քիչ մի զօրութիւնս երկարեցրիք մինչ այս ժամանակս: Հիմա թող ոչնչանայ այլ ես, քանի որ իմ տեղակալս ազատած է. — յաղթութիւն. փրկուեցաւ. —

Տեղակալ. Բարի աչնիւ հոգի:

Վիրաւորոյթ. (Վաճառականին). Բարեկամ, աճապարէ է Տեղակալին համար լաւ անկողինով խույզ մի պատրաստէ վերջը զինքը այնտեղ պիտի փոխադրենք և լաւ դարմանը, լաւ խնամքն ու լաւ կազմուածքը անտարակոյս պիտի ցուցնեն իրենց ոյժը:

Վաճառական. Պիտի աճապարեմ (տուն կը մտնէ)

Տեղակալ. Պ. դօքտոր, ամենէն առաջ իմ քաջ տասնապետս քննեցէք. հրացանի հարուած մի ստացած է թեկին մէջ և ինձ հաւար ընդունած է այն գնդակը: Ամենալաւ կերպով կապեցէք զինքը —

Տասնապետ. Նախ զ2եղ, պ. Տեղակալ. —

Տեղակալ. Երբոր սենեակս լինիմ, ոչ հիմայ.

Վիրաւորոյթ. Բայց տեսնեմ. պ. Տասնապետ:

Տասնապետ. Բան մի չէ (Վիրաւորոյթը վերը կը քննէ.)

Տեղակալ. Ինչպէ՛ս է.

Վիրաւորոյթ. Վէրքը մեծ է:

Տասնապետ. Աստուած չը՞նէ, (Յաժ) լո՛ւտ:

Վիրաւորոյթ. Վտանգաւոր:

Տասնապետ. (Յաժ) Բայց լռեցէ՛ք, կամաց ըսէք:

Վիրաւորոյթ. Ձեր երակը շատ գրգռուած է.

Տեղակալ. Աստուած իմ, ծեր մարդը՝ Տաքցած լինել և Սկրիվիայի մէջ ոստնուլ։—

Տասնապետ. (Ցած) Վա՛յ անիծեալ, լռեցէք։—

Վիրաքոյժ. Ոչ պարոն, մեծ վտանգ կայ, ինչ որ կուղէք ըսէ՛ք Ձեր կենաց զօրութիւնները խանգարուած են լիովին։

Տեղակալ. Եւ այս ամենն ինձ համար։

Տասնապետ. Հոգ մի ընէք, եո ուժեղ կազմուած մ'ունիմ։

Տեղակալ. Տէր երկնից, Հայդրիխ կը դժգունին— Հայդրիխ...։

Վիրաքոյժ. Կը նուաղի՛ր։—

Տասնապետ. Երեւեպութիւն. ես դեռ հաստատ կանգնած եմ ոտքերուս վրայ։—

Վիրաքոյժ. Կը դողաք, նստեցէք։

Տեղակալ. Յովսէփ, ի՞նչ ունիս։

Տասնապետ. Կարծեմ այլ շատ բան չպիտի ունենամ։

Տեղակալ. Աստուած իմ, ինչէ՞ն կը հասկընաս։

Վիրաքոյժ. Ես կը վախնամ, կը վախնամ որ—

Տասնապետ. Անկեղծ խօսելով, վերջի վերջոյ ստել չեմ ուղեր, աչքերս կը մթագնին, և կարծեմ շուտով պիտի վերջանայ գործս։

Տեղակալ. Հայդրիխ։

Վիրաքոյժ. Արդէն գուշակեցի այդ։ Օ՛ ծեր մարմինը, ահագին ճիգերը, անակնկալ ցուրտ առնելը, հրացանին հարուածը, արիւն կորսնցնելը...։

Տեղակալ. Ազատեցէք, պ. Դօքտօր, ազատեցէք զինքը։

Վիրաքոյժ. Կարծեմ ի զուր է։ Գերեզմանը շատոնցունէ ի վեր պայմանաժամը լրացած պարտք մի կը պահանջէ։

Տեղակալ. Նա այնպիսի քաջ զինուոր մի էր և այսպիսի խեղճութեամբ պիտի մեռնի, և ոչ թէ իւր դրօշին մօտ փառաւոր ճակատամարտի մի մէջ։

Տասնապետ. Փառաւոր—պ. տեղակալ, իմ՝ դրօշիս մօտ թէ՛ և չեմ մեռնիր ես, բայց իմ դրօշիս համար կը մեռնիմ, բանի որ իմ կայսերս, հայրենեացս համար քաջ սպայ մի պահեցի և ես կը հպարտանամ նորանով, որպէս թէ զինանշանը ազատած լինէի. Դրօշները դարձեալ կասեղնագործուին և կոսկեղծուին, բայց իմ Տեղակալիս պէս դիւցապն մի վերստին չի գտնուիր։

Վիրաբոյժ. Կուրծքերնուդ վրայ տազնապ մի կղզա՛ք,
Տասնապետ. Կարծես թէ սիրտս պիտի փակուի:

Վիրաբոյժ. Մտածեցէք Աստուծոյ վրայ:

Տասնապետ. Այս առաւօտ արդէն հաշիւս աւարտեցի
Փրկչիս հետ, միայն իմ Տեղակալէս հրաժեշտ առնելու պէտք
ունիմ:—

Տեղակալ. Յովսէփ, Յովսէփ. ինձ համար կը մեռնիս:

Տասնապետ. Աչքերս կը տկարանան.—Ո՛ր է Ձեր ձեռ-
քը, ձեր ձեռքը, պ. Տեղակալ: Յետին անգամ մի ես ինձի տուէք
զայն:—Այսպէս, մնաք բարեաւ:—Կտակի պէտք չունիմ, զա-
ւակներ չունիմ բան մի չունիմ ժամացոյցէ զատ. պ. Տեղակալ,
պահեցէ՛ք զայն իբր ծեր ու պատուաւոր մարդու մի յիշատակը,
որ հաւատարիմ մնացած է Ձեզ, մինչև մահ հաւատարիմ:—

Տեղակալ. Ա՛յս պիտի լինի զինն իմ ազատութեան:

Տասնապետ. Ըսէք իմ ընկերացս՝ երբ հայրենիք վերա-
դառնաք այս է իմ վերջին կամքս, ըսէք իմ ընկերացս, ես
դասալիք մի չեղայ, մինչև գերեզման բարի Աւստրիացի մնացի
և քաջութեամբ ծառայեցի իմ կայսերս, իմ հայրենեացս և իբր
պատուաւոր մարդ մի մեռայ:—

Տեղակալ. Ամէն ազնիւ մարդոց յիշողութեան մէջ պիտի
ապրիս միշտ:

Տասնապետ. Անգամ մի ես խոստացէք, պ. դօքտօր, թէ
իմ տեղակալս պիտի ազատի:

Վիրաբոյժ. Աստուծոյ օգնութեամբն իւր ապաքինելուն
վրայ չեմ տարակուսիր:

Տասնապետ. Փակուեցէք ուրեմն, ո՛վ իմ ծեր աչքերս,
փակուեցէ՛ք.—յաղթութի՛ւն. իմ Տեղակալս ազատեցի ես: (Կը
մեռնի):

Տեղակալ. Յանուն Աստուծոյ կը մեռնի՛ր...

Վիրաբոյժ. Անգամ մի ես չկանգնելու պայմանաւ:

Տեղակալ. Լմեցաւ.

Վիրաբոյժ. Իւր կեանքը լրացած է.

Տեղակալ. Իրեն հետ թողէք զիս:—Կը ծնրագրեմ բու-
առաջդ, որ դու իմ մեռեալ, ճշմարիտ բարեկամս, վշտով և
ողբով կը ծնրագրեմ:—Հայրենիք, տե՛ս այսպիսի սրտեր կը բա-
բախեն բու որդւոցդ մէջ, այսպիսի գործեր կը կատարուին բու
աբեգական ներքեւ:—Հպարտացի՛ր, ո՛վ Հայրենիք:

Խաղաղութեան օր. ՅԵՐԱՍԱԼԱՅԻՑ